

Արշալույս ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԻՆՁՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԱՐՐԸ Վ. ՄԱՐՈՅԱՆԻ
ՍՏԵՂԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գրական ասպարեզ իշխանությունը անցյալ դարի 30-ական թվականներին՝ Վիլյամ Սարոյանը նոր և յուրօրինակ մոտեցում դրսելու է իր ժամանակի ամերիկյան իրականությունն ու առհասարակ մարդու ներաշխարհը բացահայտելու գործում։ Խիստ աճճնական կամ մանրուր թվացող շիշտերի միջոցով նա կարողանում է հասնել նշանակալի ընդհանրացումների։ Սարոյանի ստեղծագործության մեջ տարրերը ժամանակագրական իմաստով խիստ սահմանազատված չեն, սակայն միշտ առկա է ինքնակենսագրական տարրը թե՝ միջնորդավորված և թե՝ ակնհայտ, բափանցիկ ձևով։ Որպես բնորոշ օրինակ դիտարկվում է «Խմ անոնը Արամ է» ժողովածուն։ Ստեղծագործական ավելի ուշ շրջանում ինքնակենսագրական տարրը առավել ամբողջական ձևով արտահայտվել է նրա ինքնակենսագրական տարրաբնույթը արձակում։

Բանափի բառեր. Վ. Սարոյան, մարդու ներաշխարհ, ինքնակենսագրական տարր, Ես-ը վերագունելու ճանապարհ, անձնականը և գեղարվեստականը, իուշագրություններ

20-րդ դարի անգլալեզու գրականության ամենախճնատիա դեմքերից մեկը՝ Վիլյամ Սարոյանը, ասպարեզ մտավ անցյալ դարի 30-ականներին՝ դրսելու միանգամայն նոր, յուրօրինակ մոտեցում իր ժամանակի ամերիկյան իրականությունը, անհատի և հասարակության հարաբերությունները և առհասարակ մարդու ներաշխարհը բացահայտելու գործում։ 1934 թվականին լույս տեսավ նրա պատմվածքների ժողովածուն՝ «Խիզախս պատանին թոշող ճոճանողի վրա» վերնագրով։ Ժամանակի քննադատությունը չկարողացավ միանգամից գնահատել գրքի բերած նորությունն ու թարմությունը։

1930-ական թվականները ԱՄՆ-ի համար դժվար սոցիալ-քաղաքական ժամանակներ էին. հասարակական գիտակցությունը ներքափանցված էր մոայլ գույներով, գրականությունը հիմնականում միտված էր խոշոր, մասշտաբային կտավների ու հարցադրումների, փորձում էին պարզաբնել սոցիալական, քաղաքական կյանքի ընդերքում տեղի ունեցող տեղաշարժերը, տեղատվություններն ու մակրնթացությունները։ Հանդես էին գալիս Թոնսաս Վուլֆը, Չոն Դու Պատոսը, Հեմինգվուեյը, Չոն Սթայնը երբ, Ֆոլքները, Շերվուդ Անդերսոնը. անուններն արդեն խոսում են իրենց մասին։ Եվ ահա հայտնվում է 26-ամյա մի երիտասարդ հեղինակ, որը մի կողմ դնելով իր վաստակաշատ գրական նախորդների և ժամանակակիցների փորձը՝ բերում է նոր աճակ։ Շրջանցելով կարծես մարդկանց գիտակցությունը ճնշող ծանր խնդիրների գորդյան հանգույցը՝ նա միանգամայն պարզ հնչերանգով սկսում է պատմել իր տարեկից ինչ-որ երիտասարդների, իր պես սկսնակ գրողների, ամենասովորական կենցաղով ապրող մարդկանց առօրյայի մասին։ Թերևորեն, կարծես առանց

ճիզի, մակերեսորեն ու հպանցիկ, նրա գրչի տակ բացվում են մարդկային ճակատագրեր, նաև ողբերգական, ինչպես, օրինակ, ժողովածուի վերնագիրը դարձած պատմվածքի հերոսի դեպքում, գծագրվում են դեմքեր, որ խիստ ծանոթ են, նկարագրվում են իրավիճակներ, իրադարձություններ, որ պատահել ու պատահում են միլիոնավոր ամերիկացիների հետ: Կարդալով Սարոյանի պատմվածքները՝ մարդիկ ճանաշում են իրենք իրենց և շրջապատող իրականությունը, բայց դա ճգնաժամային, հոռետես տրամադրություններ չի ստեղծում վերջ ի վերջո, այլ արթնացնում, արմատավորում է զարմանալի զգացողություններ ու մտքեր, որոնց շնորհիվ մարդիկ ապրում են: Թող որ դրանք «աննշան» են, «անհարիք իրականությանը», «ոչ ճշմարտացի», բայց դրանք փաստորեն կան մարդկային եռորդան խորքերում պահված, և Սարոյանը հիշեցնում, ապացուցում ու համոզում է, որ արևը միշտ էլ փայլում է, ուղղակի երբեմն ամպերն են ծածկում նրան: Խիստ անձնականի, ոչ բնորոշի կամ մանրութ թվացող շեշտերի ու մանրամասների միջոցով նա կարողանում է հասնել նոյնքան նշանակալի ընդհանրացումների ու համամարդկայինը վերծանելու բանալիների:

Հետաքրքիր է, որ թե՛ այս ժողովածուի և թե՛ դրան հաջորդած մյուս պատմվածքների հերոսների մեջ և՛ ժամանակի և՛ հետագայի գրաքննադատները շատ բան են տեսել անձամբ հեղինակի կյանքից: (Այդ մասին աված է Հ. Ֆլուանի 1966 թ. իրատարակված «Վ. Սարոյան» մենագրության մեջ, ոուս գրականագետ Ա. Չվերեկի 1982թ. «Սարոյանի արևոտ, տիսուր աշխարհը» գրքում, էջ 32 և այլն):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 1936թ. իրատարակված իր “Inhale and exhale” («Ներշնչում և արտաշնչում») խորագրով ժողովածուին Սարոյանը սպել է “an autobiographical interlude” ենթավերնագիրը:

1930-ական թվականների վերջերից Սարոյանի ստեղծագործության մեջ գերակշռում է բատերգությունը, նրա պիեսները արժանանում են բատերական քննադատների ուշադրությանն ու հավանությանը: Այստեղ ևս, ինչպես պատմվածքի ժանրում, նա եղել է նորարար, «կրահել» շատ ու շատ սկզբունքներ ու միտումներ, որ այն ժամանակ դեռևս սաղմնային վիճակում էին և սպասում էին իրենց լիարյուն մարմնավորմանը: 40-ական թթ. գրում է կինոսցենարներ, համագործակցում է Հոլիվուդի հետ, հետագայում՝ գրում նաև վեպեր: 1952-ից սկսած հիմնականում գրել է հուշեր և ինքնակենսագրություններ: Ընդհանրապես, Սարոյանի ստեղծագործության մեջ տարբեր ժանրերը ժամանակագրական իմաստով խիստ սահմանազատված չեն, սակայն նրա բոլոր ստեղծագործություններում, ինչ ժանրի էլ որ պատկանեն, միշտ առկա է ինքնակենսագրական տարրը ոչ միայն անուղղակի, միջնորդավորված ձևով, ինչպես շատ գրողների երկերում, այլև որոշակի, ակնհայտ ու թափանցիկ: Այս իմաստով դժվար է գտնել մեկ այլ օրինակ:

20-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ Սարոյանի և՛ անձի, և՛ ստեղծագործության նկատմամբ առաջանում է նշանակալի հետաքրքրություն: Գրվում և բեմադրվում է անգամ պիես Սարոյանի մասին: (1996թ. կոնֆերանսի նյութերից): Լույս են տեսնում մի շարք գրքեր, այդ թվում երկուսը Սարոյանի

որդու՝ Արամ Սարոյանի հեղինակությամբ: («Վերջին ծեսերը. Վ. Սարոյանի մահը» 1992 և «Վ. Սարոյան» 1983):

1983թ. լույս է տեսնում Դևիդ Քալոնի «Վիլյամ Սարոյան. իմ իսկական գործը լինելն է» գիրքը, 1984թ. Լոուրենս Լիի և Բարրի Գիֆորդի «Սարոյանի կենսագրությունը» և նույն 1984-ին Էդուարդ Ֆուքերի «Վիլյամ Սարոյան» մենագրությունը: Գրականագիտական մոտեցման առումով առավել հետաքրքիր են վերջին երկուսը: Տվյալ հոդվածում արձարձվող հարցերի տեսանկյունից՝ կիհշատակենք միայն Դևիդ Քալոնի գրքի իններորդ՝ «Հիշողության ճանապարհը» գլուխը: Ըստ Քալոնի՝ Սարոյանի ողջ ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մասնատված ես-ը վերագրուելու, դեալի հոգեկան առողջացում ու վերականգնում տանող ճանապարհ: Հոգու ու տիեզերքի միաձուլման խոր տենչանքը առհասարակ առաջնահերթ թեմաներից է եղել ամերիկյան գրականության մեջ՝ սկսած Ուիթմենից և Տորոյից մինչև Ջեկ Քերուար և Հենրի Միլեր: Սարոյանի ստեղծագործությունը Քալոնը դիտարկում է որպես այդ խորընթաց միտումի ևս մի արտահայտություն. «Ինչպես Ուիթմենը..., - ասում է նա, - Սարոյանը փնտրում է լինելությունը (experience of being), նա ուզում է գնալ ուղիղ դեպի իրերի սիրտը, փութեանդրեն, անմիջականորեն և կրքոտ» /Calonne, 1983: 8/:

Անդապահոնարկ Սարոյանի հուշագրությանը՝ նա նշել է, որ այն ոչ միայն կենսագրական տվյալների աղբյուր է, այլև գրողի արձակի լավագույն մասերից մեկը: Այդ գործերի ամենաբնորոշ մոտիվը Սարոյանի օտարվածության մշտառուն զգացողությունն է, նրա անձի երկիրեղկածությունը: Նա մտասեեռված է դեպի իր անձնական զգացմունքներն ու կենսափորձը՝ որոնելով իր անհատականության ու պահվածքի հոգեբանական, այսպես կոչված, նախանյութը, ատաղձը: Այդպիսի մոտեցումը Քալոնը նմանեցնում է հոգեվելությունը:

Համառոտ անդապահոնարկ նաև Էդուարդ Հալսի Ֆուքերի՝ 1984-ին լույս տեսած «Վ. Սարոյան» գրքին: Իր իսկ խոստովանությամբ խորագնին ուսումնասիրության չհավակնող այս գրքով նա փորձ է արել պարզել, թե ո՞րն է Սարոյանի սիրվածության և անվերապահորեն հեղինակությունների շարքում դասվելու գաղտնիքը: Ջննելով նրա ստեղծագործությունը՝ Ֆուքերը նույնապես գնում է դեպի նրա անձը, ծագումը, ընտանիքը՝ անընդհատ կապելով այդ ամենը կոնկրետ ստեղծագործությունների հետ: Խոսելով բուն ինքնակենսագրական գործերի մասին՝ Ֆուքերը մի կողմից դիտում է դրանք որպես գեղարվեստական արժեք չներկայացնելու օժանդակ նյութեր, մյուս կողմից՝ շարունակ քննում է Սարոյանի անցյալը (background) հենց այդ գործերի մեջ՝ պարզելու համար նրա ժառանգության այշշափ կենսունակ լինելու հարցը: Ֆուքերը արել է մի ուշագրավ դիտարկում, ըստ որի Սարոյանը կարողացել է գտնել և արտահայտել իր մշակութային անցյալից կենսափորձի այնպիսի ըմբռնում, որը շատ մոտ է ամերիկյան գրականության մեջ արդեն հաստատված մտահայեցությանը: Ինչևէ:

Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում նրա՝ թերևս ամենահայտնի և ամենասիրված գրքերից մեկը՝ «Իմ անունը Արամ է»

ժողովածուն, որը լրյու է տեսել 1940 թվականին: Շարքի 14 պատմվածքները ընթերցելիս առաջին հայացքից կարող է բվալ, թե դրանցից յուրաքանչյուրը Սարոյանի պատմանեկան կյանքի այս կամ այն դրվագը պատկերող հուշեր են: Եվ, իսկապես, ընտանեկան ալբոմի լուսանկարներից և կենսագրությունից մեզ հայտնի մարդկանց մենք հանդիպում ենք այստեղ. լինի դա մայրիկը կամ քենի խոսրովը «Խեղճուկրակ արաբը» պատմվածքից, Ղարօղլանյանների պապը «Ուղևորություն դեպի Հանֆորդ» և այլն: Իրական են նաև քաղաքի փողոցներն ու եկեղեցիները, քաղաքից դուրս գտնվող բլուրներն ու գետերը, փշածածկ չոր հողերը, որտեղ քենի Սելիքը փորձում է նույնիներ աճեցնել: Բնականաբար մեծ է գայրակղությունը՝ նույնացնել պատմվածքի հերոսներին ու նրանց նախատիպերին և, այնուամենայնիվ, ոչինչ նույնական չէ: «Իմ անունը Արամ է» գիրքը իրականի ու անիրականի հազվագյուտ մի համաձայնվածք է, գեղարվեստականի և վավերագրականի մի բացառիկ փոխմերթափանցում և համապում:

Սհավասիկ «Հնաոճ սիրավեպ սիրային ոտանավորներով ու այլեայլ բաներով» և «Կրկեսը» պատմվածքները: Գլխավոր հերոսը՝ Արամ Ղարօղլանյանը, իր շարածճությամբ, սրամտությամբ և աշխուժությամբ հիշեցնում է պատանի Սարոյանի ճշգրիտ դիմապատկերը: 20-րդ դարասկզբի ամերիկյան փոքրիկ քաղաքի դպրոցում, իհարկե, կարող էին իրական միսս Դաֆնիներ և միստր Դերրինգըներ կամ Դոուսըներ լինել, այնքան իրական, ոքքան տաղտկալի դպրոցական ծրագրերն ու դաստիարակության միակ հուսալի միջոցը համարվող «տեր-քոփիկյան» ծեծը, բայց ահա Արամի և իր ընկերոջ՝ դպրոցի տնօրենի հետ ողջ խոսակցությունը խիստ երգիծական, նույնիսկ սարկաստիկ հնչերանգով թերևս՝ ոչ:

Կամ, օրինակ, պատանի հերոսի և Լոկոմոտիվ 38-օջիբվեյ կոչվող «ցնդած» հնդկացու արկածները «Լոկոմոտիվ 38» պատմվածքում: Եթե անգամ պատկերացնենք, որ իրական է սատկած էջի փոխարեն թանկարժեք «պակկարդ» գնող միլիոնատեր մի հնդկացի բնիկ, որը անշահախնդիր կարող է ուրախանալ իր նոր կրտսեր ընկերոջ՝ մեքենա վարելու հաջողությամբ, ապա աննկատելիորեն, ինչոր մի պսիկի վերհուշ-իրականությունը արագորեն վերածվում է կյանքում առաջին անգամ մեքենա նստած, բայց փողոցներով անվեհեր պլացող պատանի հերոսի մասին տղայական հրճվանքով ու հպարտությամբ լեցուն մի լեզենդի:

Կամ վերցնենք պատանի Ղարօղլանյանի պապի կերպարը «Ուղևորություն դեպի Հանֆորդ», «Իմ զարմիկ հուսուոր Տիգրանը» և այլ պատմվածքներից: Մի քիչ տարօրինակ, Սարոյանի խոսքերով, մի քիչ խենթուխելառ ծերունի է կարծես: Միննույն ժամանակ քեզ բռնում են այն զգացողության վրա, որ խիստ տիպական մի հայ պապ է քո առջև, իր խստությամբ, իր ծիծառով և իմաստությամբ, քեղերով կամ առանց քեների, բայց հենց այնպիսին, ինչպիսին են շատերը:

Սիա այսպես կարելի է քննել պատմվածաշարի բոլոր հերոսների կերպարներն ու դրվագները, դեպ առ դեպ, անուն առ անուն: 40-ական թվականներից սկսած Սարոյանը շատ է ստեղծագործել նաև վեպի և թատերզական ժամաներում և դրանք ևս շոայլորեն ներթափանցված են ինքնակենսագրական մոտիվներով:

Ինքնակենսագրական տարրը ժանրային առումով առավել ինքնուրույն և ամբողջական դրսորում է ստանում Սարոյանի ստեղծագործության ուշ և հատկապես վերջին շրջանում: Առաջին ինքնակենսագրությունը՝ «Հեծանվորող Բներլի Հիլսից», լույս է տեսել 1952-ին: 1960-ական թվականներից սկսած՝ մեկը մյուսին են ինքնակենսագրական, հուշագրական բնույթի հետևյալ գրքերը. «Ահա եկավ, ահա զնում է ինքն գիտես, թե ով» (1961), “Here Comes, There goes you know Who”, “Short drive, sweet chariot” (1966), “Letters from 74rue Taitbout” (1969), “Day of Life and Death and Escape to the Moon” (1970), “Places where I’ve done time” (1972), “Sons come and go, mothers hang in forever” (1976), “Chance meetings” (1978), “Obituaries” (1979), “Births” (1983): Վերջինս, ինչպես նաև համապատասխանաբար 1984 և 1986թթ. լույս տեսած “My name is Saroyan” և “An Armenian Trilogy” գրքերը լույս տեսան գրողի մահվանից հետո: Արժե նշել, որ այս գործերը բարձր են գնահատվել նաև քննադատության կողմից: “Obituaries” գիրքը «Նյու Յորք Թայմս»ի տվյալներով համարվել է լավագույնը 1979 թ. ինքնակենսագրությունների մեջ: Սարոյանի գրական ժառանգության մի զգայի մասը կազմող այս ստեղծագործությունները նպատակահարմար ենք գտնում դիտարկել ինքնակենսագրական-հուշագրական արձակ անվանումով: Այստեղ և՛ հուշեր են, և՛ ինքնակենսագրություն, և՛ ակնարկներ, և՛ ուղեգրություններ, և՛ նամականի, և՛ անգամ մահախոսականների և ծնունդների մասին հայտարություններից ծնված խոհերի գրառումներ: (“Obituaries” և “Births” գրքերը):

Փաստորեն, ինքնակենսագրական տարրը, որով շռայլորեն հագեցած է նրա ամրող գեղարվեստական ստեղծագործությունը, այս գրքերում ձեռք բերեց իր զարգացման օրինաչափ արդյունքը և ավելի բյուրեղացավ: Ի դեպ, ինքը Սարոյանը չէր տարբերակում իր ստեղծագործությունները գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի:

Սարոյանի ինքնակենսագրական-հուշագրական արձակը առավել ուշագրավ է դառնում, երբ այն դիտարկում ենք 20-րդ դարի 50-70-ական թթ. գրականության, մասնավորապես ամերիկյան գրականության զարգացման համատեքստում, որովհետև այն համընկնում է, այսպես կոչված, վավերագրական ժանրի բուռն ծաղկման տարիներին: Վավերագրականի և գեղարվեստականի միահյուսման «սարոյանական» մոտեցումը հետագա ուսումնասիրության և առանձին հոդվածի նյութ է հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարոյան Վ. Ընտիր երկեր 4 հատորով, Երևան, 1986:
2. Callone D. My real work is being. London, 1983.
3. Foster E. William Saroyan. Boise, Idaho, 1984.
4. Lee Lawrence and Gifford Barry Saroyan: A biography. New York, 1984.
5. Saroyan A. Last Rites: The Death of William Saroyan. New York, 1982.
6. Saroyan A. W. Saroyan. San Diego: A Harvest Book, 1983.

7. Saroyan W. Inhale and Exhale. New York, 1936.
8. Saroyan W. The Bicycle Rider in Beverly Hills. New York, 1952.
9. Saroyan W. Here comes, there goes you know who. New York, 1961.
10. Saroyan W. Short drive sweet chariot. New York, 1966.
11. Saroyan W. Letters from 74 rue Taitbout. New York, 1969.
12. Saroyan W. Days of life and death and escape to the Moon. New York: Dial Press, 1970.
13. Saroyan W. Places where I've done time. London, 1972.
14. Saroyan W. Sons come and go, mothers hang in forever. New York, 1976.
15. Saroyan W. Chance meetings. New York. 1978.
16. Saroyan W. Obituaries. Berkeley Creative Art Book, 1979.
17. Saroyan W. Births. Berkeley California, 1983.
18. Saroyan W. My name is Saroyan. San Diego: A Harvest Book, 1984.
19. Saroyan W. An Armenian Trilogy. Frezno, 1986.
20. Зверев А. М. Грустный солнечный мир Сарояна. Ереван, 1982.

А. ПЕТРОСЯН – Автобиографический элемент в произведениях

В. Сарояна. – Вильям Сароян вошел в литературный мир в 30-х годах прошлого века и проявил новый и своеобразный подход в изображении американской действительности своего времени и внутреннего мира человека. Через сугубо личное и на первых взглядах несущественное он приходит к значительным обобщениям. В творчестве Сарояна разные жанры хронологически строго не ограничены, но везде как опосредованно, так и прозрачно присутствует автобиографический элемент. В статье как типичный пример рассматривается сборник рассказов «Меня зовут Арам». В более позднем периоде творчества Сарояна автобиографический элемент более целостно проявился в его разнородной автобиографической прозе.

Ключевые слова: В. Сароян, внутренний мир, автобиографический элемент, дорога к приобретению идентичности, личное и художественное, мемуаристика

A. PETROSYAN – *The Autobiographical Element in the Works of William Saroyan.* – Appearing in the literary world in the 30-s of the 20th century W. Saroyan demonstrated a new and original approach in revealing the American reality of his time and generally the inner world of the man. He succeeded to make profound observations and come to significant conclusions through something very personal and seemingly unimportant. Chronologically there are no strict demarcations of different genres in his works but the autobiographical element is always present both implicitly and explicitly. The collection of stories “My name is Aram” is viewed in the paper. In comparatively later period of Saroyan’s writing career the autobiographical element gained its more complete reflection in his diverse authobiographical prose.

Key words: W. Saroyan, inner world, authobiographical prose, a way to identity, the personal and the fictional, memoirs